ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամը (այսուհետ՝ Քոլեջ) հայտարարում է մրցույթ՝

- ✓ «Խոհարարական գործ» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղը համալրելու համար:

➢ Սահմանված պահանջները.

Համապատասխան մասնագիտական կրթության որակավորում կամ՝

ա) վերջին 10 տարվա ընթացքում 2 տարվա տվյալ մասնագիտությամբ աշխատանքային փորձ,

բ) վերջին 5 տարվա ընթացքում տվյալ մասնագիտությամբ վերապատրաստման վկայական՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված ուսուցման ծրագրով:

➢ Սահմանված փաստաթղթերի ցանկը՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

➢ Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են Քոլեջում՝ 2022 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2023 թվականի հունվարի 12-ը ներառյալ:

➢ Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի հունվարի 13-ին՝ ժամը 11-ին, Քոլեջում:

➢ Հասցեն՝ Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 5:

☎ Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի № 48-Ն հրամանին կամ զանգահարել (0263) 4-36-59, (094) 000415 հեռախոսահամարներով: